ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսիի 1

№ 1772-Ա « 12 » մայիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՊՈՂՈՏԱ Հ.5 ՇԵՆՔ Հ.25,26 ՀԱՍՑԵՈՒՄ՝ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ՍՈՒՐԵՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ և 28-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/4988/05/22 վարչական գործով վճիռը, Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12–ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 01.04.2025թ. տրված մասնագիտական եզրակացությունը, ինքնակամ կառույցների չափերի մասին «ԿԱՆՈՆ ԱՐԵՆԱ» ՍՊԸ-ի կողմից 08.01.2021թ. տրված շինությունների հատակագիծը և բնութագիրը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձի դիմումները (26.01.2021թ. հ.Ս-9110, 08.07.2022թ. հ.Դ-46622-22, 24.10.2024թ. հ.Դ-136078-24, 11.03.2025թ. հ.Դ-15935-25).

1. Երևան, Կենտրոն, Սայաթ-Նովայի պողոտա հ.5 շենք հ.25,26 հասցեում քաղաքացի Անահիտ Սուրենի Ստեփանյանի կողմից ինքնակամ իրականացված 208.08 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի (բնակարան)), ինքնակամ միջհարկային բացվածքը 1 (մեկ) հատ և ինքնակամ բացված պատուհանները 2 (երկու) հատ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11.01.2021թ. հ.11012021-01-0140 վկայական) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 4191600 (չորս միլիոն մեկ հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ